

ԲԱԺՆԵԳԻՆ
Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "
—
Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "
—
Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ
—
ԿԱՆԻՆԿ



ՊԱՅՄԱՆՔ
Գրութիւնք ետ
չեն տրուիր:
—
Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE
—

ՇԱԲԱԹԱՅՍՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ՀՈԿՏ. 21 ՇՈՒԼԻՍ 1900

ԹԻԻ 184

Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

ՏԱՆԸ ԾԵՐԸ

Պարտէզ մը կը մտնէք. կը գիտէք ինչ որ բնութիւնն արտագրած է հոն թարմ ու ծիծաղուն, ինչ որ արուեստը, խնամքը ներդաշնակած է հոն աղւոր ու զարդարուն, ծաղիկները կը տեսնէք մասնաւոր ածուներու մէջ գոյնզգոյն, իրարու հետ հաշտ ու համաձայն, թերթեր տերեւներ վարվառն փալփալուն, թուփերուն կը նայիք մատղաշ, տունկերը կը գիտէք իրարու քով իրարմէ հեռի գետնէն բուսած կանաչ ու սիրուն, կը նշմարէք հոն կեանքը, կեանք մը երանաւէտ որ կը ծլի կը բալբալի, ու հեշտին ուրախութիւն մը կը պարարէ սիրտերնիդ: Գոհ էք:

Սակայն... ինչէ՞ն է որ պահ մըն ալ աչքերնիդ չորս կողմ կը պտտցնէք ու հին կ'ըզ մը կը փնտռէք անոնց մէջ, ուրիշ անգամ տեսած էիք զայն հոն, մայրի մըն էր գոսացած, կամ եղբին մը ծերացած, որ այն պարտէզին մէջ կանգնած էր անսասան, ու հնութեան պատկառանքը կը բուրէր հոն, չկայ հիմա, ո՛ւր է այս կոճղը, հինաւուրց հաստարմատ ծառ մըն էր անկիւն մը քաշուած, խաղաղ անխօսիկ այն աշխոյժ ու կենսալից բոյսերուն մէջ, ալեւոր պահապանի ստուեր մը կը տարածէր անոնց վրայ, ո՛ւր է ան, վերցած է մէջտեղէն, և սակայն դեռ երէկ հոն էր:

Մինակ մնացած են հիմա միւս ծառերն ու ծաղիկները, լքուած մը կայարտէզին մէջ, տնտիրական երևոյթ մը որ կը սեղմէ հոգին, ո՛ւր է այն հին կոճղը, նախախնամութիւնն էր անրկա պարտէզին, ո՛վ դպաւ անոր:

Պարտէզ մ'է արդէն ընտանիքն ալ, ու ծերր' իր նախախնամութիւնը: Չգիտեմ համամիտ էք ինձի, ո՛վ դուք որ ծեր մը ունիք ձեր ընտանեկան յարկին տակ, անկ'ւնը նստած, ծեր մը որ կը նախադահէ ձեր սեղանին ու օրհնութիւն կուտայ անոր: Կը յարգէք զինքը, կը գուրգուրաք անոր վրայ և աղէկ կընէք, իր կարկամած սրտին հրճուանքն ուխտի մըմունջ մըն է որ առ Աստուած կուզուի ձեզի համար:

Անձայն անշուշտ էակ մըն է անիկա, իրեն մէջ ամփոփուած, բայց կը լեցնէ ձեր տունը:

Ծերութիւնը շնորհ մը, սրբութիւն մը պարգեւած է իրեն զոր կը սփռէ իր շուրջ և անով կը պահպանէ ձեր նիստն ու կացքը: Պահապան հըրեշտակն է ձեր յարկին:

Իդնն ու տենջանք դադարած են իր հոգիին խաղաղ ալքերուն մէջ, ձեզմով մ'նակ երջանիկ, ձեզի նուիրուած է ամբողջովին:

Ոչինչ է ինքը, տարիներու բռնան տակ ճնշուած անկար ալկաղկ էութիւն մը, բայց ի՞նչ մեծ է այն ոյժը զոր կը ներշնչէ ձեզ մի միայն իր շունչովը:

Ապահովութեան պէս բան մ'ը կը զգաք ձեզ մէջ, երբ ցաւերու տրտմութեան վայրկեաններուն իր մօտն ապաստանիք, բան մը չունի խեղճը ձեզի տալու, իր ալօթքը միայն ունի ու զայն կուտայ բոլոր հոգւովը, և այնչափը բաւական է ձեզի: Կը սփռէք զայն, պարտականութիւն մը չէ միշտակ ատիկա ձեզի համար, այլ բնական զգացում մը որ կը կտայէ ձեզ իրեն հետ ու... դառնութեամբ նայիլ կուտայ այն անկիւնը զոր օր մը կը լքանէ և ուր սովոր էիք դուք տեսնել զինքը:

Առաւօտները գործի գացած ատեննիդ երբ իր ձեռքն համբուրէիք ու մնաս բարով ըսէիք, շերմ

մաղթանքներ կը բղխէին իր սիրտէն ու կ'ընկերանային ձեզ, ծերի մաղթանքներ հաւաքով լեցուն :

Իրիկուններն ակնդէտ կապաւոր ձեռքի, տենդոտ, անհանգարտ, երբ քիչ մը ուշանայիք : Աչքերունդ մէջ կը կարդար ձեր ուրախութիւնը կամ վիշտը, երկուքն ալ մասնակից՝ առանց իսկ գիտնալու :

Պատմութիւններ ունէր միշտ. հին օրերու յիշատակներէն քաշուած, ալեւորի պատմութիւններ, պարզ ու միամիտ խորհրդածութիւններով ուրբ յաճախ իմաստասիրութեան դաս մը կարծէին :

Դուք ամէն ինչ էիք իրեն համար. կեանքի շնորհամբերուն մէջ երբ ուրիշներ անարգէին արհամարհէին ձեզ, ինք իր գիրկը կը բանալ ու կը գրկէր ձեզ. հոն յարգի էիք գուր ու թանկագին :

Արիւնը սառած էր իր երակներուն մէջ, բայց իր շունչը տաք էր. իր սէրը օտարի սէրը չէր նիւթապաշտ ու յեղեղուկ. կրակ չունէին իր զգացումները, բայց անարատ էին և անալլայ :

Հաւատոյ ճրագ մը կը վառէր իր հոգւոյն մէջ, ծերունի հաւատացեալի հոգի. յետք պատրանքներն ու տառապանք խաւարեցնէին ձեր սիրտը. նոյն ճրագը կը լուսաւորէր զայն :

* *

Ընտանիքին ծերք :

Ոչինչ է ինքը, տարիներու բեռն տակ ճընշուած անկար աղկաղկ էութիւն մը. բայց երբ ոչնչանայ, պարտէզին կոճղն է որ կը պակսի :

Ընտանիքի ծերքը, տանը օրհնութիւնը, թող ըլլայ ան մեծ մայր մը, կամ մեծ հայր մը եւ կամ... հօրաքոյր մը :

Աւ միթէ Ս. գիրքն ալ չի՞ մաղթեր մեզի ամեն օր, «Ծեր ի տանէ քումմէ մի՛ պակասեցի» :

ԱՐՏ

ԱՉԴԱՅԻՔ

Քարիզ բնակող Տ. Ռաբիկ Մարկոսեան ի յիշատակ հանգուցեալ տիկին Երանուհի Կիւմիւշկէրտանի, մինչև 1250 անգամ մեծցնող ընտիր մանրացոյց մը նուիրեր է Ազգ. Հիւանդանոցի, որուն բժշկական քննութեանց մէկ անհրաժեշտ պէտքը կը լրանայ այս նուէրով :

— Պարսից Շահը Դավրէժ երթալուն առթիւ Երևանէն անցած ըլլալով Էջմիածին ալ

հանդիպեր և Վեհ. Հայրապետին շնորհեր է Առիւծի և Արեւի պատուանշանին ականակ ու աստիճանը :

— Երուսաղէմէն կը գրեն թէ սեպտ. 29 ուրբաթ իրիկուն Ս. Աստուածածնայ տաճարին մէջ հրդեհ պատահեր է, ուստի մոլորիկներու եւ մաքառիւններու կողմէ Ս. Կոյսին գերեզմանին ետին յունապատկան սեղանին վրայ մամ վառելուն պատճառաւ, բոյց շուտով առաջըն առնուեր է :

— Անցեալ կիրակի տեղւոյս Որբախնամ ընկերութեան ընդհ. ժողովը չկրցաւ գումարիլ անդառնող մեծամասնութեան բացակայութեանը պատճառաւ. Ուստի վաղը նորէն նիստ պիտի գումարի կէս օրէն վերջը ժամը 2ին ներկայ գտնուող անդամներով. սոյն նիստէն բացակայ գտնուողները իրաւունք չպիտի ունենան տրուած որոշումներուն դէմ բողոքելու :

— Թիֆլիզի հայ վաճառականները յաշուեր են իրենց շանքով ու դրամական օգնութեամբը Առևտրական վարժարան մը բանալ տալ ուսական վարժարան : Բացման հանդէսը կատարուեր է սեպտ. 30ին : Սոյն վարժարանը յաջողեր են մտնել 550 աշակերտ, որոնցմէ 440ը հայ են (ծիշդ 100, ին 80ը) մնացածները Ռուս, Վրացի, Հրեայ, Ալմանացի եայլն :

ԿԱՐԵՒՈՐ ԱՁԴ

«Ողորմութիւն արէք Հայուն
անտուն անտէր որբուկին» :

Հրատարակուեցաւ ՈՐԲՈՒՆԻ կամ ՊԱՏԿԻՐԱՋԱՐԴ ԲԱՑԱՌԻԿ ԲԱԶՄԱՎԷՊը, ի նպատակ հայ Որբիկներուն : Եօթանասուն գեղատիպ պատկերներ է և խիստ շահեկան յօդուածներէ բաղկացեալ սոյն երկը որ Վենետիկի Մխիթարեան Վճրապատուելի Հարց փառքը կաւելցնէ, իր համեմատ գնոյն տասնապատիկը աւելի արժէք ունի : Վրտահոթեամբ կըսենք թէ գրպանը մինակ 2½ ֆրանք ունեցողն իսկ պիտի փափագի ունենալ այս սքանչելի հատորիկէն :

Դիմել ի Վենետիկ Ս. Ղազար, հետեալ հասցեով

Redaction de la revue Pazmaveb

St. Lazar

(ITALIE)

VENISE

ՍԻՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՆՔԱՄՈՒԻ ԼԵՁՈՒՆ

Ճերմակը՝ ամուսնութեան համար է։

Սուրճը՝ սգոյ համար է։

Մանիշակագոյն՝ ակազեմականներուն համար։

Շորջույի գոյն՝ ճաշի հրաւերի համար։

Կարմրուկ՝ (զենճեճի)՝ գործերու մէջ կը գործածուի։

Սուտակ՝ (կարմիր եագոյթ)՝ բարեբաղդ սիրոյ նամակներու համար։

Կանաչ՝ այն մասին յոյս ունենալուն համար։

Թխագոյն՝ վշտալից նամակի համար։

Կապոյտ՝ հաստատամտութեան համար։

Դեղին՝ նախանձու համար։

Վարդագոյն՝ աղջկանց յատուկ։

Մոխրագոյն՝ բարեկամներու միջև կը գործածուի։

Թալուկ կանաչը՝ մեղադրանք և ստորանք կը ցուցնէ։

ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԻ

Նամակին վերի աջ անկիւնը եթէ շիտակ և զլուխը վեր փակցուած է, կը նշանակէ. — Ձեր բարեկամութեան կը փափաքիմ։ Եթէ լայնութեանը փակած է. — Ձիս կը սիրէք։ Գլուխը վար. — Այլ ինձի նամակ մի՛ գրէք։ Ծուած. — Անմիջապէս գրեցէք։

Եթէ պահարանին վարի կողմը, աջ դին կանոնաւորապէս փակցուած է. — Ձեր սէրը կը զմալլեցնէ զիս։ Ձախ կողմի վերի դին, զլուխը վար. — Կը սիրեմ ձեզ։ Լայնքին. — Սիրտս ուրիշի մըն է։ Գլուխը վար. — Բարեբաղդ և անհաւատ։ Վարի ձախ դին, զլուխը վար. — Հաւատարիմը պիտի վարձատրուի։ Հորիզոնական զրուծեամբ. — Վշտացս մէջ զիս մի՛ երեսէ ձգէք։ Գլուխը վար. — Ամէն փորձանքի կը յաղթանակէք։

Գծաւոր թղթագրողը, զրկողին անունով, եթէ անունաւոր կերպով շիտակ շիտակ փակցուած ըլլայ, կը նշանակէ. — Ընդունեցէք սէրս։ Լայնքին. — Կը սոսիս։ Դիմ ձեզ տեսնելու համար։ Շրջուն. — Ես սպաս չեմ։

Բարից

Թարգմ. Տ.

ՓՈՔՐ ԹՂԹԱՏԱՐ

Տիար Յ. Ո. Պուրկաղ. — Ձեր պատասխանը ըստ օրինի պէտք է զրկէք այն թերթին՝ որուն մէջ այդ խնդիրը գրուեցաւ։


Տ. Յ. Ժընէվ. — Բաժնեգրինը կանխիկ է։

ԹԱՏԵՐԱԿԱՆ

«Վէսէյո» թատերախումբը այս գիշեր պիտի ներկայացնէ «Հայրասպանը» անուն կատակախառն տրամը 3 արար. Վալըր Գիշեր ալ «Բարիզի լրագրավաճառը» բարոյալից կատակախառն տրամը 4 արարուած։

Փորձի դրուած է «Ձինաստանի կռիւմարտիկները (Պոքսէն)» հետաքրքրաշարժ խաղը։

ՀԱՐՑ ԱՌ ԲՈԺՈԺԻԿ



ԵՐԲ ՊԻՏԻ ՎԵՐՆԱՆ

— Լրագիրներու մէջէն սուտ ու փուտ լուրերը.

— Պատրաստ ծախուած խահուէին մէջէն լէպ-լէպին.

— Յիսուննոց կնիկներուն պօեա քսուիկները.

— Իօաֆաթ իշի մուխափա տօլմասի կոշիկները.

— Թաղականներու մենձ աղայութիւնները.

— Պիպէնի պէս հոգի վառող խալովուզները.

— Ձրի լրագիր կարգացող օթլախճիւները.

— Թրախամայական խորըլթըները.

— Արուն—բերան խաչագողները.

— Կուսակցական կռիւները.

— Վարժարաններու անբարեկարգութիւնները.

— Վերջապէս ե՞րբ պիտի վերջանն սա առտու իրիկուն իրարու յաջորդող տնակործան մօտաները.

ՋՈՒԹԱԿ

Բոժոժիկ. — Երևոյթին նայելով, ասոնք յաւիտեանս յաւիտենից վերնալիք չունին։

ՀԱՐՑԱՐԱՆ

«Վիճակագրութեանց մէջ ամենէն խոշոր գումարը կազմողը ո՞ր բանը կրնայ ըլլալ»։

Առաջին ճիշդ պատասխանողին պարգևն է ներկայարար անուն 4 արարուած թատերախաղ մը։

Պահարանին վրայ պէտք է դրել «Յանձնելի Մ. Հ. Ի»։

ԶԱՆԱԶԱՆՔ

ԲԱՐԻՉԻ ՄԷՉ ԱՇՈՒՆԸ

Ասկէ քանի մը ամիս առաջ Բարիչի բուն ժողովուրդը, այսինքն անոնք որ Բարիչին այնքան մեծ համբաւ և վարկ կուտան (աղնուականները, գրագէտները, գիտնականները, արդիստները, հարուստները ևայլն ևայլն) Բարիչէն կը փախչէին՝ անոր տաքէն, գիւղերը, գլխակները և ծովեզերքները ապաւինելու համար։ Հիմա աշունը սկսելով, այդ փախստականները կաւաց կամաց ետ կուգան իրենց սիրելի Բարիչը նորէն տեսնելու և հոն բնակելու, նորէն սկսելու իրենց աշխարհային բարձր և զուարճալի կեանքը։

Ուստի նորէն սկսան Բարիչի ձմեռնային եղանակներու զուարճութիւնները, ընդունելութիւններ, թատրոններ, երեկոյթներ, նուագահանդէսներ, պարահանդէսներ, ցերեկոյթներ, հացկերոյթներ, ժողովներ և հազարումէկ նիստեր, որոնք շատ հարկաւոր և անհրաժեշտ են եզեր, բարեգործութիւններ ընելու և մանաւանդ զուարճանալու, ինքզինք ցոյց տալու և ռեկլամներ ընելու համար։ Զէ՞ որ պէտք է այսինչ աղջիկը՝ որ մեծ օժիտ ունի և կամ այն ինչը՝ որ բան մը չունի՝ ամուսնացնել, չէ՞ որ այս ինչ երիտասարդին համար նշանած մը գտնելու է... Պէտք չէ՞ որ այս ինչ տիկինը իրեն համար շուքորթոյն, սիրահարներ, տարփածունի գրտնէ... պէտք չէ՞ որ իրարու բամբաւեն, զիրար ցելը խօթեն ու հանեն, պէտք չէ՞ որ տարազները և զարդարանքները փոխեն, քննադատեն, նորէն ստեղծեն... Եթէ բոլոր այս խոշոր քլորալուսները չըլլային, ի՞նչպէս պիտի անցնէին իրենց ժամանակը, այդ դասակարգին պատկանող խեղճ անձինքը։

Տիկիները իրենց ամբողջ ուր կանցնեն իրենց արդուզարդի, զանազան այցելութիւններով... զուարճութեամբ, իսկ մարդիկը... էհ մարդիկն ալ միևնոյնը կը են իրենց համար, զարմանալու ի՞նչ կալ, չէ՞ որ ըստ մեծ յիշատիութեան սովորած սկզբունքին, «ամէն մարդ ազատ կը ծնի և կապրի ազատ»։ Ուրեմն, ուրեմն ընդ առաջ, կեցցեն ուրախութիւնք և զուարճութիւնք, այս առթիւ ամէն Ծրանասացի սրտի բերկրանք կը կրկնէ Ծրանասացի մեծ թագաւորին նշանաբանը «ինձմէ յետոյ թող չըհեղեղ լինի»։

Ս. Դ.

Քալէ-Շամքաւի մէջ տոժ մը. — Անցեալ շաբաթու գիշեր մը հետեւեալ տեսարանը անցեր է Բարիչի Քալէ-շանթաներէն մէկուն մէջ։ Խոշոր գիրերով ծանուցուած էր թէ նոյն գիշերը սրճարանին ծանօթ երգչուհիները պիտի երգէին ըստ սովորութեան, մինչդեռ վերջին աստիճանի փոքրիկ գիրերով զեկոյցին տակը գըրուած էր վերջին պահուն թէ այդ փայլուն երգչուհիք նոյն իրիկունը չպիտի մասնակցէին։ Հասարակութիւնը, որ զանոնք մտիկ ընելու համար միայն դրամ տուած ու սրճարան մտած էր, կը սկսի պոռալ կանչել որ երգեն։ Նոյն իրարանցումին մէջ շատերն ալ իրենց դրամը ետ կուզեն։ Տնօրէնը կը փորձէ ինքզինքը արդարացնել զեկոյցը կարգաւոր ըստ գործը աւելի կը գեշցնէ։ Աթուներն ու գաւաթները կը սկսին օդին մէջ քոյլա խաղալ, մինչ ուրիշներ, աւելի կատաղած կապերը կը մարեն, ապակիները կը կոտրեն։ Այս ընդհանուր խռնաշփոթութեան միջոցին չարածճի մըն ալ կերթայ կը բանայ շուրին ծարաղը որ հրդեհի օտեն կը գործածուի։ Ջուրն անմիջապէս կ'օդոյէ սրահը ուր գըրտնողները այս յանկարծական տուժէն խիստմեղած հաշիւ ինքզինքնին փողոց կը նետեն։ Ուստիկանութիւնը դժուարաւ կը դադարէ այդ շարժումը, և կէս գիշերին արդէն անցած է եզեր երբ վերջին աճը սրահէն դուրս վառուներ է։

* *

Թէ ինչպէս կը գործադրուի կտակ մը. — Գիւղացի մը զգալով իր մօտակայ մահը, կինը քովը կանչելով կըսէ անոր «Սիրելի կին, ես պիտի մեռնիմ և մեռնելէս առաջ կուզեմ կտակս ընել»։ Ու իր բոլոր վերջին կամքը գրել տալէ ետքը կը յաւելու. «Գալով ձիուս ու շանս, ձին կը ծախես և ծնողացոյ կուտաս ստակը, իսկ շանս գինը քեզի թող ըլլայ»։

Ու խեղճ մարդը կը մեռնի։

Սուգի օրերը անցնելէ ետքը, գիւղացիին կինը փափաքելով իր լուսահոգի ամուսնոյն վերջին կամքերը կատարել, կառնէ ձին ու շունը և փճուրդի կը դնէ զանոնք։ Չիուն 25 ոսկի կուտային, սակայն շունը մէկը չէր ուզեր ծախու առնել։

— Առանց մէկուն միւսը չեմ ծախեր, ըսաւ գիւղացի կինը, եթէ կուզէք երկուքը միասին ծախու առէք, պայմանաւ որ շունին վճարէք 25 ոսկի իսկ ձիուն համար 20 զրուշ։

Թէպէտեւ գնողին խելքը չը հասաւ այս առարկութեան՝ սակայն հաւանեցաւ։

Յաջորդ օրը հնազանդ կինը 20 շրջա՝ ձիուն
գինը տարաւ իր ամուսնոյն ծնողացը տուաւ և
իրեն պահեց շանը գինը, 25 տակին:

ՀԱՐՑ—ՊԱՏԱՍԽԱՆԻ

Կնոջ մը առաքինութիւնը անեղծ պահող
հաւատարիմ պահպանը ո՞րն է.

— Տգեղ գէմքը:

Դժուարամարտութեան մատնուելու եւ բը-
ժըզկի կարօտ ըլլալու համար ի՞նչ ընել պէտք է.

— Ագահ, հիւր ըլլալ:

Անձնական աղատութիւնը ծախող եւ ինք-
զինքը գերի ընողին ի՞նչ անուն կուտան.

— Պարտկան:

Մոլութիւն մը սնուցանելը քանի՞ կը նստի
մարդուս.

— Երկու պաւակ մեծցնելէ աւելի սող:

Աշխարհիս մէջ գիտութենէ աւելի գեղեցիկ
ի՞նչ կայ.

— Պարկեշտութիւնը:

Ինչո՞ւ համար մարդ ուրիշին աչքին մէջի
չիւղը կը կը տեսնայ, իսկ իր աչքին մէջի գե-
րանը չի տեսնար.

— Վասն զի աչքն իւր մէջը նայելու դիւ-
րութիւն չունի:

Ի՞նչ են կանայք.

— Թէ բարիք եւ թէ չարիք.

Ինչի՞ կ'նմանին.

— Ոսի, որ աչուրնէրէ գարցունք կը բե-
րէ եւ սակայն դարձեալ կուտես:

ԶՈՒԼԱՐԱՆ

ՏՊԱԿՐԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒ

ՅԱԿՈԲ ԾԵՐՈՒՆԵԱՆԻ

Կը ձուլէ ամեն լեզուէ տպագրական տառեր,
մասնաւորաբար Հայերէն եւ Թուրքերէն, Էսպան-
Քատրաթ, Էնթէրլիներ, Գիթ եւ Կարնիւթիւր:

Գիները յոյժ գիւրամատչելի, Հասցէ.

AGOP DZĖROUNIAN SOPHIA (BULGARIE)

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

Խլափող Տիկին Համոզող Սիրս-Վառդեանին
Ծանուցումը

«Մանչ մը ունիմ հինգ հազարի,
Մանչ մ'ալ ունիմ տասն հազարի.
Այս երկուքն ալ թէեւ աժան՝
Կարգել կուզեմ ես այս տարի:

Հինգ հազարնոցը Ձիյնկիր է,
Կունտ ու կլոր բան մըն է.
Մարդ կը ծծէ երբ ճնկէ,
Այլընայ նէ՝ խուզ է:

Ձեռքը չունի, լեզուն կայ,
Ինք խաւարած լուսնկայ.
Հաթերը պատռած ըլլալուն՝
Մութ տեղուանքէն երթայ գայ:

Կարգալ զրել չը գիտէ,
Աղւոր մանի կը կանչէ.
Ուր որ երթայ, լեռ, այգի
Հետն է շիշը ճիպրէի:

Իսկ մեծ մանչս տասն հազարնոց
Խոյուննի է կրակ ու բոց.
Միայն վրան լեցուն վերք խոց,
Տարիքն ըսէք՝ քառսուն-հինգնոց:

Հինգ հազարով, տասն հազարով
Ով որ աղջիկ ունի տունով,
Աղւոր տեսք վ քիչ տարիքով
Ձեռագործով և ուսմունքով:

Թող գան ինծի խօսքը ընենք,
Փարաներն ալ բէշին առնենք.
Ու հալելի խեղճ աղջկանց
Սիրտն ու հոգին այսպէս խանձենք:

Փ. Պղիս

Տիկին Համոզող Խլափողեան

Բոժոժիկ—Աս ծանուցումը կարգ մը որ-
դեսէր ծնողաց ուշադրութեանը յանձնելով կը
յորդորենք զիրենք որ անմիջապէս այս զոյգ մը
կիրաւարսան պահուսանը խաբարմիջ ընեն, վասն
զի ամեն ատեն շիշար ասանկ ֆէյթիւր ապրանք:

ԵՐԿՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏՂԱՔՆԵՐ

ԶԱԿԱԶԻԿԻ ՄԷՋ

Ծօ Մինաս, մեր աղգային վարժարանէն ելար միւսիւ ֆինկ-ֆօնկին վարժարանը դացիր նէ պարէ բան մը սորվեցար:

— Սորվեցայ, եւ:

— Ի՞նչ սորվեցար:

— Հայերէն, Գաղիերէն, Անգղիերէն, Թուաբանութիւն, Աշխարհագրութիւն, Պատմութիւն:

— Էյ դաստուներնիդ որո՞ք են:

— Իշթէ միւսին է:

— Կրնայ կոր ամենուդ հասնիլ:

— Ինչո՞ւ չպիտի հասնի. զօռ բա՞ն մըն է. մենք 45 աշակերտ ենք. ամենուս ալ դասերը տալէն ետքը անոռչ եփելու պիլէ վախիթ կուսենայ կոր:

— Անանկ է նէ կեցիր քեզի բան մը հարցնեմ:

— Հարցո՞ւր:

— Բարիչը աշխարհիս ո՞ր կողմն է:

— Ըհ, ադ ալ բանս ըլլայ. Ասիան մէջն է:

— Վա՛յ ապուշ. Եւրոպային մէջն է:

— Ես ալ անանկ գիտէի ամա՛ մեր միւսիւն՝ իր շինած Ասիայի խառնիւրդին մէջ աղւոր աեղ մը դրաւ:

— Պատմութիւն գիտե՞ս:

— Լմեցուցի պիլէ:

— Զրհեղեղը ե՞րբ եղաւ:

— Քրիստոսէ 150 տարի ետքը:

— Այն ատենը ի՞նչ երեւելի դէպք պատահեցաւ:

— Սուրբ Ստեփաննոսը քարկօծեցին:

— Անկէ ետքը ի՞նչ նշանաւոր դէպք պատահեցաւ:

— Ա՛յ կէ ետքը Պետրոսը պատմութեանս թուղթը պատռեց:

— Գաղիերէնի մէջ ո՞ւր տեղուանքն ես:

— Անկանոն բայերը լմեցուցինք:

— Էմէ բայը խոնարհէ նայիմ:

— Խոնարհեմ. սահմանական եղանակ, կէմեմ, կէմես, կէմէ. կեմենք, կեմէք, կեմեն:

— Պաւլո՞ւ. Թուաբանութիւնը միւնչե ո՞ւր կարդացիր:

— Լմեցունելուս մատ մը մնաց:

— Խնդիր մը ըսեմ տէ՛ լուծէ. թէ՞ որ մակոյ-

կի մը մէջ չորս հոգի ըլլայ, նոյն մակոյկէն ութսունը մէկ իննսուն և իննեորդ մեծութեամբ մակոյկի մը մէջ քանի՞ հոգի կրնայ ըլլալ:

— Ատիկա բազարըլը դիտէ:

— Բազարըլը մէկդի. այսինքն քանի՞ հոգի կրնայ առնել անանկ մակոյկ մը:

— Էհ, ո՞վ գիտէ, մենք պալըխի սանտալ մը ըլլայ նէ կէնէ էքէյի մարդ կառնէ:

— Էյ աֆէրիմ. պաւլո՞ւ. հայրիկդ թող տահա միւսիւիդ պօլլամաներուն ափանջ կախելով քու աղւոր ժամանակներդ սպաննէ:

— Եղբայր, ես հայրիկիս կըսեմ կոր ամա, մտիկ չընեմ կոր:

— Զիւնքիւ շաբաթը մէկ երկու գիշեր ձեր միւսիւէն իգուամ ըլլալով շիշէ մը մաստիֆա կը խմէ կոր . . . :

Խալիլիա Գրքիր

Բոժոժիկ — Ատանկ հօր մը զաւակը եթէ ասկէ աւելի բան մը սորվի՝ թո՛ղ սատանան զիս տանի:

«Պոլսոյ Գումգաբուի Ստասիօնի սրճարանին այս տարուան մօտան:

— Պարոն Աստիկ, պանա պիւր գահվէ սէօյլէ:

— Գալըդօ օլսուն, օնլուգ մու եիրմիլիք մի:

— Պու նէ՞ լագըրտը տըր. օնլուգ պաշգա եիրմիլիք պաշգա՞ մը:

— Էօյլէ եա, պագասնա՛, պէշ բարմաղըն պի՞ր մի տիր:

— Սէն պանա օնլուգտան բիշիր պագալըմ:

— Քէստանէ սուլու պի՛ր. . .

— Քէստանէ սուլու նէ՞ տիր պէ, պէնիմ իչին մի:

— Սէն քէֆինէ պա՛գ. նէնէ՞ կէրէք, պիղ չօգ լաֆ խէրիզ:

— Նասըլ նէնէ կէրէք, պէն քէյֆ իտէճէիմ, սէօյլէ եիրմիլիք եաքսըն:

— Մասնաւոր պի՛ր. . .

— Նէ՞ մասնաւորու պէ՛, ճուրճինայա՞ մը չըգտըգ սապահլալըն:

— Զո՛գ լագըրտը իսթէմէզ, հէմ պանա պա՛գ, օ գատար թիրիարի իտէն՝ պաստըր գուրուշու աղըզ տատըլա գահվէ իչ. եօգսա 10 բարա 20 բարա ըլա իչէճէին եա քէստանէ սուլու տըր, եա նօհուտ:

ՄԱՐՏԻ

Отговорникъ Ж. ИВ. ЖЕКОВЪ
Печатница „Взаимность“ — Варна.